19
ՀՈՒՆԻՍԻ
2020

Luys Lnyu®

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՐԵՔԶԻԹԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ. ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՐԵՔՋԻԹԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ. ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Luys Lույս®

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԲՐԵՔՋԻԹԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ԴՐԱ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 2

2. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ» ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ՝ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԽԱՂԱՑՈՂ 10

3. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 19

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարավկովկասյան տարածաշրջանը ավանդաբար եղել է Մեծ Բրիտանիայի (ՄԲ) աշխարհաքաղաքական շահերի և հետաքրքրությունների առանցքում, և այժմ էլ Լոնդոնը մեծ կարևորություն է տալիս տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին: ԽՍՀՄ փլուզումից ի վեր բրիտանական բիզնեսը՝ հատկապես նավթային ոլորտի հսկաները սկսեցին վերականգնել Հարավային Կովկասում իրենց ունեցած երբեմնի դերակատարությունը: Բրիթիշ Փեթրոլիումը (ԲՓ) դարձավ Ադրբեջանի նավթագազային արդյունաբերության գլխավոր լոկոմոտիվը: Անցած մի քանի տասնամյակների ընթացքում տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի տնտեսական շահերի աճին զուգահեռ օբյեկտիվորեն մեծացել է նաև այնտեղ վերջինիս քաղաքական ներգրավվածությունը:

Միաժամանակ վերջին տարիներին մեծ փոփոխությունների է ենթարկվել հենց Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությունը՝ պայմանավորված Բրեքզիթի գործընթացով և դրան ուղեկցող զարգացումներով: Բրիտանական, ինչպես պաշտոնական, այնպես էլ վերլուծական-փորձագիտական, շրջանակները ավելի հաճախ են շրջանառում «Գլոբալ Բրիտանիայի» (“Global Britain”) գաղափարը, որը ենթադրում է արտաքին քաղաքականության վերաիմաստավորում և Լոնդոնի աշխարհաքաղաքական դերակատարության մեծացում[1]:

2020թ. հունվարի 31-ին Մեծ Բրիտանիան պաշտոնապես լքեց Եվրոպական միությունը, ու թեև մի շարք հարցերի շուրջ Բրյուսելի հետ բանակցությունները շարունակվում են, իսկ վերջնական լուծումները դեռ մշուշոտ են, այնուամենայնիվ, ԵՄ-ի հետ Մեծ Բրիտանիայի պաշտոնական «ապահարզանի» փաստը ինքնին նշանակում է, որ Լոնդոնը առաջիկայում փորձելու է վերանայել իր արտաքին քաղաքական առաջնահերթությունները՝ այդ թվում Հարավկովկասյան տարածաշրջանում:

Միաժամանակ, Բրեքզիթի գործընթացի ավարտը իր ազդեցությունը կթողնի նաև ԵՄ արտաքին քաղաքականության վրա: Գաղտնիք չէ, որ Լոնդոնը ավանդաբար մեծ ազդեցություն է ունեցել ԵՄ արտաքին քաղաքականության վրա. հաճախ մի շարք առանցքային հարցերում Մեծ Բրիտանիան հակադրվել է ԵՄ մյուս ազդեցիկ դերակատարների՝ Ֆրանսիայի ու Գերմանիայի հետ:

---

[1] Global Britain: delivering on our international ambition, GOV.UK, 23.09.2019, https://www.gov.uk/government/collections/global-britain-delivering-on-our-international-ambition, (այցելվել է 16.06.2020թ.):

Ուշագրավ է, որ Մեծ Բրիտանիան, լինելով Եվրամիության կազմում, հանդես էր գալիս դեպի արևելք ընդլայնման գործընթացի պաշտպանության դիրքերից, իսկ հատկապես վերջին տարիներին, ակնհայտորեն սատարում էր (առաջին հերթին Արևելյան Եվրոպայի երկրների՝ Լեհաստան, Մերձբալթյան երկրներ) հակառուսական նախաձեռնությունները: Այս տեսանկյունից՝ Բրեքզիթի գործընթացի ավարտը կարող է նշանակալի փոփոխությունների ենթարկել ԵՄ արտաքին քաղաքականությունը ինչպես Ռուսաստանի ուղղությամբ, այնպես էլ ԱԼԳ ծրագրի շրջանակներում:

Այս վերլուծությամբ փորձել ենք հասկանալ Բրեքզիթի գործընթացի աշխարհաքաղաքական հետևանքները, ինչպես նաև գնահատել, թե այն ինչպիսի ազդեցություն կունենա Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի քաղաքականության վրա: Մի շարք գործընթացների ուսումնասիրությունը թույլ է տվել հանգել այն եզրակացությանը, որ Բրեքզիթի գործընթացի ավարտից հետո Լոնդոնը փորձելու է ավելի ամրապնդել Հարավային Կովկասում իր ներկայությունն ու ազդեցությունը: Ինչ վերաբերում է ԵՄ-ին, ապա վերջինս ՄԲ-ի բացակայության պայմաններում կփորձի տարածաշրջանում ավելի հավասարակշռված և պակաս «ագրեսիվ» քաղաքականություն իրականացնել, այդ թվում՝ հաշվի առնելով ներեվրոպական խնդիրներն ու մարտահրավերները, որոնք, կապված կորոնավիրուսի համաճարակի պայմաններում ստեղծված ճգնաժամի հետ, առաջիկայում հավանաբար ավելի կխորանան[2]:

1. ԲՐԵՔԶԻԹԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ԴՐԱ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

2020թ. հունվարի 31-ին Մեծ Բրիտանիան պաշտոնապես դուրս եկավ Եվրոպական միությունից, ինչը նշանակում է, որ Լոնդոնը փետրվարի 1-ից դադարեցրել է իր անդամակցությունը ԵՄ ինստիտուտներին և մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին: Թեև ԵՄ-ի հետ պաշտոնական «ապահարզանին» դեռ պետք է հետևեն երկարատև ու բարդ բանակցություններ՝ մի շարք ոլորտներում երկկողմ հարաբերությունները կարգավորելու նպատակով, սակայն Մեծ Բրիտանիան արդեն իսկ իր արտաքին քաղաքական օրակարգը վերափոխելու հնարավորություն է ստացել:

Զուգահեռաբար որոշակի փոփոխությունների է ենթարկվելու նաև ԵՄ-ի արտաքին-անվտանգային քաղաքականությունը: Հաշվի առնելով Մեծ Բրիտանիայի

[2] E. Brattberg, K. Brudzińska, B. Pires De Lima, Contending European Views on a New Post-Brexit Balance, 25.03.2020 https://carnegieendowment.org/2020/03/25/contending-european-views-on-new-post-brexit-balance-pub-81354 (այցելվել է 16.06.2020թ.):

և ԵՄ-ի գլոբալ դերակատությունը՝ այս գործընթացը անխուսափելիորեն իր ազդեցությունն է ունենալու ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային անվտանգային համակարգերի վրա:

Մեծ Բրիտանիայի արտաքին-անվտանգային քաղաքականության ճարտարապետությունը կառուցված է մի քանի հիմնական գործոնների վրա: ԵՄ-ից դուրս գալուց հետո այն կենթարկվի որոշակի փոփոխությունների, սակայն դրա հիմնական բաղադրիչները կշարունակեն պահպանվել: Այսպես, ՄԹ-ի դիվանագիտական ազդեցությունը հիմնված է հետևյալ կարևոր գործոնների վրա՝

1) հատուկ հարաբերություններ այսպես կոչված «Հինգ աչքերի» հետ (5 երկրների՝ ԱՄՆ-ի, ՄԲ-ի, Ավստրալիայի, Կանադայի և Նոր Զելանդիայի համագործակցությունը հետախուզության ոլորտում՝ հիմնված Երկրորդ աշխարհամարտի տարիներին կնքված Միացյալ Թագավորություն-ԱՄՆ համաձայնագրի վրա),

2) ԱՄՆ-ի հետ հատուկ հարաբերությունները,

3) ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ լինելու հանգամանքը,

4) Ազգերի բրիտանական համագործակցություն անդամ 54 երկրների հետ հատուկ հարաբերությունները,

5) անդամակցությունը ՆԱՏՕ-ին,

6) Մեծ յոթնյակի (G7) անդամ լինելու հանգամանքը:

Մինչ Բրեքզիթի գործընթացը 7-րդ կարևոր գործոնը համարվում էր անդամակցությունը ԵՄ-ին, որին այժմ կարող են փոխարինել հատուկ հարաբերությունները ԵՄ-ի և դրա առանձին անդամ երկրների հետ:

Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ազդեցության գործոնները



Միջազգային փորձագետներից շատերը համոզված են, որ նույնիսկ ԵՄ-ից դուրս գալուց հետո ՄԹ-ը մեծ մասամբ պահպանելու է արտաքին և անվտանգային քաղաքականության ոլորտներում ԵՄ-ի հետ սերտ համագործակցությունն ու գործողությունների ներդաշնակեցումը՝ միաժամանակ ստանալով խուսանավելու և արտաքին հարաբերությունների ավելի մեծ ցանց ձևավորելու հնարավորություն[3]: Կանխատեսվում է նաև, որ զգալիորեն կմեծանա Մեծ Բրիտանիայի նկատմամբ ԱՄՆ-ի ազդեցությունը, ինչը նույնպես իր հետքը կթողնի Լոնդոնի արտաքին քաղաքական օրակարգի վրա:

Մյուսները կարծում են որ Բրեքզիթից հետո Մեծ Բրիտանիայի գլոբալ ազդեցությունը կնվազի, քանի որ վերջինս արդեն չի ներկայացնելու 500 մլն բնակչություն ունեցող և համաշխարհային ՀՆԱ-ի 20%-ը տիրապետող կառույցը: Այս պնդման համար որպես փաստարկ ներկայացվում է այն հանգամանքը, որ ԵՄ-ի

[3] Lee D. Turpin, The Future of UK-EU Defence Cooperation Post-Brexit: A Neoclassical Realist Approach, University of Lancaster, UK, 22-25.08.2018, https://ecpr.eu/Filestore/PaperProposal/8036257f-7807-43aa-9ab8-497c18d34f41.pdf (այցելվել է 16.06.2020թ.):

արտաքին ազդեցության կարևորագույն գործիքներից մեկը հանդիսանում է միջազգային առևտուրն ու պատժամիջոցները, ինչը հնարավոր է դառնում ԵՄ մասշտաբների շնորհիվ: Բրիտանիան, դուրս գալով ԵՄ-ից, փաստորեն կորցնում է ազդեցության այս կարևոր գործիքը, որից բազմիցս օգտվել է (օրինակ՝ Սկրիպալների հետ կապված միջադեպի ժամանակ)[4]:

Առհասարակ, Բրեքզիթի գործընթացից հետո Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության վրա այս կամ այն չափով իրենց ազդեցությունն են ունենալու համաշխարհային քաղաքականության մեջ տեղի ունեցող հետևյալ զարգացումները.

- ԱՄՆ-ի «մեկուսացման քաղաքականությունը» և համաշխարհային գործընթացներին վերջինիս ավելի քիչ միջամտելու մտադրությունը:
- Համաշխարհային էներգետիկ շուկաներում տեղի ունեցող զարգացումները:
- ԵՄ-ԱՄՆ հակասությունների խորացումը մի շարք ոլորտներում՝ կլիմա, առևտուր, Իրան, ՌԴ-ի և ՉԺՀ-ի հետ հարաբերություններ և այլն:
- Չինաստանի աճող համաշխարհային ազդեցությունը և ՌԴ-ի ավելի ակտիվ արտաքին քաղաքականությունը:
- Որպես նոր, անկանխատեսելի, բայց կարևոր գործոն կարող է դառնալ կորոնավիրուսի համաճարակի հետևանքով աշխարհում, ԵՄ-ում և Մեծ Բրիտանիայում ստեղծվելիք նոր իրավիճակը:

Անդրադառնանք վերոհիշյալ հանգամանքներից յուրաքանչյուրին.

ԱՄՆ-ի «մեկուսացման քաղաքականությունը» և համաշխարհային գործընթացներին ավելի քիչ միջամտելու մտադրությունը կարող է միջազգային հարաբերություններում որոշակի վակուում առաջացնել, որը կփորձի լցնել Մեծ Բրիտանիան: Հաշվի առնելով ԱՄՆ-ի հետ հատուկ հարաբերությունները և ԵՄ-ԱՄՆ հակասությունները՝ Մեծ Բրիտանիան կարող է մի շարք տարածաշրջաններում որոշակիորեն փոխարինել ԱՄՆ-ին և ավելի ակտիվ մասնակցություն ունենալ այնտեղ տեղի ունեցող գործընթացներին: Մասնավորապես, Մեծ Բրիտանիան, վայելելով ԱՄՆ-ի աջակցությունն ու հովանավորությունը, առաջիկա տարիներին հավանաբար կփորձի իր ազդեցությունը մեծացնել Մերձավոր Արևելքի, Հետխորհրդային և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններում:

[4] British Middle East strategy after Brexit, 28.11.2018, https://www.bicom.org.uk/wp-content/uploads/2018/11/middle-east-paper-FINAL-pdf.pdf (այցելվել է 16.06.2020թ.):

Սա մի կողմից ԱՄՆ-ին հնարավորություն կտա հեռանալ մի շարք տարածաշրջաններից՝ Լոնդոնի միջոցով որոշակիորեն պահպանելով իր ազդեցության լծակները, մյուս կողմից՝ Մեծ Բրիտանիայի «Գլոբալ Բրիտանիա» գաղափարը կյանքի կոչելու համար լավ նախադրյալներ կստեղծի: Թեև որոշ փորձագետներ «Գլոբալ Բրիտանիայի» գաղափարը համարում են անիրատեսական և ՄԲ-ի «իմպերիալիստական մտածելակերպի» դրսևորում, այնուամենայնիվ, եթե նման քաղաքականությունը վայելի ԱՄՆ-ի աջակցությունը, իրականանալու ավելի մեծ հնարավորություն կունենա: Եթե Մեծ Բրիտանիան Բրեքզիթից հետո կարողանա կայուն և փոխշահավետ հարաբերություններ պահպանել ԵՄ-ի հետ, ապա վերջինիս գլոբալ հավակնությունների համար կստեղծվի ավելի նպաստավոր դաշտ:

Համաշխարհային էներգետիկ շուկաներում տեղի ունեցող զարգացումները կարող են նույնպես մեծ ազդեցություն ունենալ Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության վրա: Գաղտնիք չէ, որ բրիտանական էներգետիկ հսկաները, առաջին հերթին՝ Բրիթիշ Փեթրոլիումը, մեծ մասնակցություն ունեն մի շարք գլոբալ էներգետիկ նախագծերում և իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նավթի ու գազի համաշխարհային առևտրում: Նավթի գների մեծ տատանումները, մասնավորապես վերջին շրջանում նավթի համաշխարհային շուկայում տեղի ունեցող ցնցումները, իրենց անխուսափելի հետևանքներն են ունենալու նաև բրիտանական ընկերությունների համար, ուստի Լոնդոնը իր արտաքին քաղաքական ռազմավարությունը կառուցելիս մեծ կարևորություն է տալու նաև այս գործոնին:

Միաժամանակ սպասվում է Մեծ Բրիտանիայի նավթի և գազի սեփական արդյունահանման կտրուկ նվազման դինամիկա. ըստ կանխատեսումների՝ 2035 թվականինին նավթի և գազի ներմուծումից ՄԲ-ի կախվածությունը հասնելու է 69%-ի, մինչդեռ 2018թ. դրությամբ այդ կախվածությունը կազմել է շուրջ 38%[5]: Սա նշանակում է, որ Մեծ Բրիտանիան առաջիկայում ավելի է կարևորելու իր ազդեցության ամրապնդումը նավթով և գազով հարուստ տարածաշրջաններում՝ նախ և առաջ Մերձավոր Արևելքում և Հետխորհրդային՝ մասնավորապես Մերձկասպյան տարածաշրջանում: Հենց այս տարածաշրջաններում Լոնդոնը կարող է լցնել ԱՄՆ-ի «հետքաշման» հետևանքով հնարավոր առաջացող վակուումը: Իհարկե, որոշ փորձագետների կարծիքով ՄԲ-ն իր էներգետիկ կարիքները ռուսական էներգակիրների հաշվին բավարարելու համար կարող է նաև ՌԴ-ի հետ

[5] Projections of UK Oil and Gas Production and Expenditure, UK Oil and Gas Authority, 03.2018 https://www.ogauthority.co.uk/media/5069/projections-of-uk-oil-and-gas-production-and-expenditure-march-2018.pdf (այցելվել է 16.06.2020թ.):

հարաբերությունները կարգավորելու փորձեր կատարել, սակայն առնվազն միջնաժամկետ հեռանկարում նման սցենարը գրեթե անիրատեսական է[6]:

ԵՄ-ԱՄՆ հակասությունների խորացումը մի շարք ոլորտներում՝ կլիմա, առևտուր, Իրան, ՌԴ-ի հետ հարաբերություններ և այլն, կարող են նույնպես էական ազդեցություն ունենալ Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության վրա: Մասնավորապես, մինչ այժմ այս հարցերից շատերի (թերևս բացառությամբ ՌԴ-ի հետ հարաբերությունների) պարագայում Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը ավելի շատ համահունչ է եղել Բրյուսելի, քան Վաշինգտոնի դիրքորոշմանը[7]: Բրեքզիթի գործընթացի ավարտից և ԵՄ-ի հետ տնտեսական հարաբերությունները վերջնական կարգավորելուց հետո ակնկալվում է, որ Լոնդոնը փորձելու է ԱՄՆ-ի հետ ազատ առևտրի համաձայնագիր կնքել: Սա մի կողմից Լոնդոնին հավելյալ տնտեսական հնարավորություններ կընձեռի, մյուս կողմից՝ կմեծացնի կախվածությունը ԱՄՆ-ից ու միաժամանակ կբարդացնի համագործակցությունը ԵՄ-ի հետ:

Միաժամանակ, ԱՄՆ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքումը կսահմանափակի մյուս դերակատարների՝ մասնավորապես ՉԺՀ-ի, ԵՄ-ի, Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի այլ երկրների, Թուրքիայի հետ նմանատիպ համաձայնության հասնելու Լոնդոնի հնարավորությունները: Եթե Մեծ Բրիտանիան պահպանի համեմատաբար ազատ առևտրի ռեժիմը ԵՄ-ի հետ, ապա անհնարին կդառնա նմանօրինակ համաձայնության ձեռքբերումը ԱՄՆ-ի հետ՝ հաշվի առնելով Թրամփի պրոտեկցիոնիստական քաղաքականությունը: Ավելի հավանական է թվում ՄԹ-ի և ԵՄ-ի միջև սահմանափակ առևտրի համաձայնագրի ստորագրման սցենարը, որը ՄԹ-ին հնարավորություն կտա ազատ առևտրի բանակցություններ վարել նաև երրորդ երկրների հետ[8]: Կան նաև կանխատեսումներ, որ Բրեքզիթի գործընթացի վերջնական ավարտից հետո ԵՄ-ն ու Մեծ Բրիտանիան կարող են ի վերջո

---

[6] Мэри Дежевски, Может ли Великобритания изменить свою политику в отношении России?, 13.02.2020, https://ru.valdaiclub.com/a/highlights/mozhet-li-velikobritaniya-izmenit-svoyu-politiku/ (այցելվել է 16.06.2020թ.):

[7] Delivering on the Deal: Brexit, the European Union, and Beyond, 05.02.2020, https://www.cfr.org/event/delivering-deal-brexit-european-union-and-beyond (այցելվել է 16.06.2020թ.):
D. Whineray, How Britain can shape Europe's foreign policy after Brexit, 02.01.2020, https://thehill.com/opinion/international/480931-how-britain-can-shape-europes-foreign-policy-after-brexit (այցելվել է 16.06.2020թ.):

[8] A. Bosoni, The U.K. Is Finally Making Its Brexit. What's Next?, 31.01.2020 https://worldview.stratfor.com/article/uk-finally-making-its-brexit-whats-next-eu-brussels-trade (այցելվել է 16.06.2020թ.):

մրցակիցներ դառնալ[9], և այստեղ նույնպես կարևոր կլինի ԱՄՆ-ի հետ կողմերից յուրաքանչյուրի հարաբերությունների բնույթը:

Իրանի հարցում թեև վերջին տարիներին Լոնդոնը պաշտպանում էր Թեհրանի հետ կնքված միջուկային համաձայնագիրը պահպանելու Բրյուսելի դիրքորոշումը, այնուամենայնիվ, վերջին շրջանում Մեծ Բրիտանիայի վարչապետ Բորիս Ջոնսոնը կոշտացրել է հակահիրանական հռետորաբանությունը՝ այն ավելի շատ մոտեցնելով ամերիկյան կողմի դիրքորոշմանը: Մեծ Բրիտանիայի նկատմամաբ ԱՄՆ-ի ազդեցության մեծացումը կարող է ավելի կոշտացնել Լոնդոնի հակահիրանական հռետորաբանությունը, միաժամանակ դրան կարող են նպաստել վերջինիս սերտ հարաբերությունները Մերձավոր Արևելքում Իրանի գլխավոր հակառակորդների՝ Սաուդիան Արաբիայի և Թուրքիայի հետ:

Ինչ վերաբերում է ՌԴ-ի հետ հարաբերություններին, ապա արդեն իսկ վերջին տարիներին Մեծ Բրիտանիան հետզհետե ավելի ընդգծված հակառուսական քաղաքականություն է որդեգրել, որը վերոհիշյալ գործոնների ազդեցության ներքո կարող է ավելի խորանալ[10]: Միաժամանակ, ԱՄՆ-ԵՄ որոշակի հակասությունները հակառուսական քաղաքականության շուրջ (ԵՄ որոշ երկրների դժգոհությունը պատժամիջոցներից, «Հյուսիսային հոսք-2»-ի հետ կապված ԱՄՆ-Գերմանիա հակասությունները և այլն) կարող են մեծացնել այս հարցում ԱՄՆ-ի համար Մեծ Բրիտանիայի դերակատարությունը:

Ուշագրավ է, որ ԵՄ-ն վերջին շրջանում ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Հետխորհրդային տարածաշրջանում սկսել է ավելի զգուշավոր քաղաքականություն վարել՝ հնարավորինս խուսափելով ընդգծված հակառուսական հռետորաբանությունից: Այս մասին է վկայում նաև ԵՄ կողմից վերջերս հրապարակված ԱԼԳ նոր քաղաքականությունը 2020-ից հետո, որտեղ գրեթե բացակայում է աշխարհաքաղաքական տարրը[11]: Փոխարենը, վերջին տարիներին

---

[9] T. Mctague, How Europe Will Take On Britain After Brexit, 4.11.2019, https://www.theatlantic.com/international/archive/2019/11/britain-and-europe-are-destined-be-rivals-after-brexit/601288/ (այցելվել է 16.06.2020թ.): G. Rachman, Britain and Russia are Europe's odd couple, 28.10.2019, https://www.ft.com/content/2057070e-f961-11e9-98fd-4d6c20050229 (այցելվել է 16.06.2020թ.):

[10] R. Sakwa, Russo-British relations in the age of Brexit, 02.2018, https://www.ifri.org/sites/default/files/atoms/files/sakwa_russo_bristish_relations_2018.pdf (այցելվել է 16.06.2020թ.):

[11] Joint Communication To The European Parliament, The European Council, The Council, The European Economic And Social Committee And The Committee Of The Regions, Eastern Partnership policy beyond 2020, Reinforcing Resilience - an Eastern Partnership that delivers for all, 18.3.2020, https://eeas.europa.eu/sites/eeas/files/1_en_act_part1_v6.pdf (այցելվել է 16.06.2020թ.): ԵՄ հրապարակած

Մեծ Բրիտանիան զգալիորեն մեծացրել է տարածաշրջանում իր ներգրավվածությունը և ակտիվացրել հակառուսական քաղաքականությունը՝ այդ թվում տարատեսակ հակառուսական ՀԿ-ներին և վերլուծական կենտրոններին տրամադրվող ֆինանսավորման միջոցով:

Չինաստանի աճող համաշխարհային ազդեցությունը և ՌԴ-ի ավելի ակտիվ արտաքին քաղաքականությունը նույնպես մեծ ազդեցություն կարող են ունենալ ՄԲ-ի գլոբալ հավակնությունների վրա: Ինչպես նշվեց, մի շարք տարածաշրջաններում Մեծ Բրիտանիան հավանաբար փերձելու է լրացնել ԱՄՆ-ի «հետ քաշվելու» հետևանքով առաջացող բացերը՝ փորձելով զսպել այլ դերակատարների՝ այդ թվում ՌԴ-ի և ՉԺՀ-ի ազդեցության ամրապնդումը: Սակայն եթե ՌԴ-ի հետ հարաբերությունների պարագայում Բրիտանիայի հակառուսական վարքագիծն ակնհայտ է, նույնը չի կարելի ասել ՉԺՀ-ի հետ հարաբերությունների պարագայում:

ՄԲ-ի իշխանությունները չեն թաքցնում Բրեքզիթի գործընթացից հետո ՉԺՀ-ի հետ նոր առևտրային համաձայնագիր ստորագրելու մտադրությունները, ինչը հակասում է ԱՄՆ-ի կողմից վարվող քաղաքականությանը: Հավանաբար, առաջիկայում Պեկինի և Վաշինգտոնի հետ առևտրատնտեսական հարաբերությունների հարցում հավասարակշռության ապահովումը Լոնդոնի համար դառնալու է ամենալուրջ մարտահրավերներից մեկը: Միաժամանակ, կան կանխատեսումներ, որ առաջիկա տարիներին ՄԲ-ն փորձելու է ավելի խորացնել առևտրատնտեսական հարաբերությունները Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ՝ հիմնվելով Ավստրալիայի և Ճապոնիայի հետ ունեցած ավանդական հարաբերությունների վրա[12]:

Մեծ Բրիտանիայի աշխարհաքաղաքական մտադրությունների տեսանկյունից՝ որպես նոր, անկանխատեսելի, բայց կարևոր գործոն կարող է դառնալ կորոնավիրուսի համաճարակի հետևանքով աշխարհում և ԵՄ-ում ստեղծված նոր իրավիճակը: Համաճարակի հետևանքով աշխարհում և հատկապես Եվրոպայում պրոտեկցիոնիստական, հակագլոբալիստական տրամադրությունների աճը ինքնին հակասում է «Գլոբալ Բրիտանիայի» գաղափարին: Հենց Բրեքզիթի գործընթացը մեծ հարված էր գլոբալիզմի գաղափարախոսությանը, որի առաջամարտիկը վերջին տարիներին, հատկապես ԱՄՆ-ում՝ Թրամփի նախագահ ընտրվելուց հետո,

---

«Արևելյան գործընկերության քաղաքականությունը 2020 թվականից հետո» փաստաթուղթը և Հայաստանը, «Լույս» հիմնադրամ, 22.03.2020, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=143 (այցելվել է 16.06.2020թ.):

[12] D. Hutt, Post-Brexit Britain eyes new forceful role in Asia, 22.01.2020, https://asiatimes.com/2020/01/post-brexit-britain-eyes-new-forceful-role-in-asia/ (այցելվել է 16.06.2020թ.):

հանդիսանում է ԵՄ-ը: Համաճարակի հետևանքով ստեղծված իրավիճակը կբարդացնի ԵՄ-ՄԹ հետբրեքզիթյան բանակցությունները, միաժամանակ կասկածի տակ կդնի մի շարք երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրեր ստորագրելու՝ Մեծ Բիտանիայի հավակնությունները:

Ինչևէ, մի շարք հայտնի փորձագիտական կենտրոնների կողմից արդեն իսկ հրապարակվել են տարբեր վերլուծություններ, կանխատեսումներ, համաձայն որոնց կորոնավիրուսի հետևանքով աշխարհում ստեղծված իրավիճակը հանգեցնելու է աշխարհաքաղաքական լուրջ վերադասավորումների և փոփոխությունների: Անշուշտ, Մեծ Բրիտանիան, հանդիսանալով աշխարհի ամենաազդեցիկ երկրներից մեկը, փորձելու է այդ վերադասավորումների արդյունքում ավելի ամրապնդել իր աշխարհաքաղաքական դիրքերը: Թե որքանով են իրատեսական Լոնդոնի «գլոբալ» հավակնությունները, ցույց կտա ժամանակը, սակայն մի բան ակնհայտ է՝ Մեծ Բրիտանիան պահպանելու է իր ավանդական ներկայությունը Մեծ Մերձավոր Արևելքի, մասնավորապես՝ Հարավային Կովկասի տարածաշրջանում, իսկ հնարավորության դեպքում ձգտելու է այն ավելի ամրապնդել: Հետևաբար, կարևոր է հասկանալ, թե ինչպիսի փոփոխությունների կարող է ենթարկվել ՄԲ-ի՝ որպես ինքնուրույն դերակատարի արտաքին քաղաքականությունը այս տարածաշրջանում:

2. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ» ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ՝ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԽԱՂԱՑՈՂ

Մեծ Մերձավոր Արևելքում՝ ընդհանրապես, Հարավային Կովկասում՝ մասնավորապես, Մեծ Բրիտանիան ավանդաբար ունեցել է լուրջ աշխարհաքաղաքական հետաքրքրություններ ու շահեր: Լինելով ԵՄ-ի անդամ՝ այնուհանդերձ այս տարածաշրջանում Լոնդոնի քաղաքականությունը միշտ չէ, որ համընկնել է պաշտոնական Բրյուսելի քաղաքականության հետ: Տարիներ շարունակ Մեծ Բրիտանիան կարողացել է մի կողմից՝ տարածաշրջանում իր հետաքրքրությունները համադրել ԱՄՆ-ի շահերի հետ, մյուս կողմից՝ կտրուկ չշեղվելով ԵՄ-ի ընդհանուր քաղաքական կուրսից, ինքնուրույն առաջ մղել սեփական ծրագրերն ու նախագծերը: Բավական է միայն հիշել Մեծ Բրիտանիայի մասնակցությունը ԱՄՆ-ի իրաքյան ներխուժմանը՝ ի հակադրություն ԵՄ մյուս 2 հիմնական դերակատարների՝ Ֆրանսիայի ու Գերմանիայի չեզոքությանը:

Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում Լոնդոնն ունի երկարաժամկետ անվտանգային ու տնտեսական շահեր: Դրանք ներառում են ինչպես ՄԲ-ի էներգետիկ անվտանգությունը, ահաբեկչության և ծայրահեղության դեմ

պայքարը, այնպես էլ բրիտանական առևտրի զարգացումն ու ներդրումների պաշտպանությունը: Տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի համար անկյունաքարային նշանակություն ունեն հատկապես հարաբերությունները սուննի արաբական մի շարք երկրների հետ, որոնց մի մասը նախկինում եղել են Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատի ներքո: Միաժամանակ, Լոնդոնը կարևորում է հարաբերությունները Թուրքիայի ու Ադրբեջանի հետ, որտեղ բրիտանական էներգետիկ հսկաները նախորդ տասնամյակների ընթացքում միլիարդավոր դոլարների հասնող ներդրումներ են կատարել և շահագրգռված են այդ ներդրումների անվտանգության պահպանմամբ:

Տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի ներկայությունն ու շահերը պայմանավորված են նաև վերջինիս գլոբալ հավակնություններով և ավանդական կայսերական քաղաքականությամբ: Այս համատեքստում հատկապես կարևոր է տարածաշրջանում իր հիմնական մրցակիցների՝ ՌԴ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, որոշ չափով նաև Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի չափից մեծ ազդեցության զսպումը: Բրեքզիթի գործընթացին զուգահեռ առաջ մղվող «Գլոբալ Բրիտանիայի» գաղափարը լիովին համապատասխանում է Լոնդոնի վերոհիշյալ հետաքրքրություններին, հետևաբար Մեծ Մերձավոր Արևելքը շարունակելու է մնալ այդ ռազմավարության հիմնական ուղղություններից մեկը:

Միաժամանակ, Բրեքզիթից հետո Մեծ Բրիտանիան տարածաշրջանում մանևրելու և ԵՄ-ից անկախ ու ավելի ինքնուրույն քաղաքականություն վարելու լայն հնարավորություններ է ստանալու: Ինչպես արդեն նշվեց, դրան կարող է զգալիորեն նպաստել ԱՄՆ-ի մեկուսացման քաղաքականությունը, որը չի շրջանցում նաև Մերձավորարևելյան տարածաշրջանը: Այստեղ հարկավոր է ուշադրություն դարձնել վերջին տարիներին Մեծ Բրիտանիայի և ՌԴ-ի միջև մրցակցության խորացման և երկկողմ հարաբերություններում լարվածության շոշափելի ավելացման հանգամանքի վրա: ԵՄ-ն հավանաբար առաջիկա տարիներին կփորձի թուլացնել տարածաշրջանում ՌԴ-ի հետ մրցակցությունը և, հաշվի առնելով ԱՄՆ-ի հետ հարաբերություններում առկա խնդիրները, կխուսափի տարածաշրջանի այլ դերակատարների հետ լուրջ առճակատումներից: Փոխարենը, ՄԲ-ն կփորձի ավելի ամուր դիրքավորվել տարածաշրջանում՝ մի կողմից՝ ներկայանալով որպես ԱՄՆ-ի հիմնական գործընկեր, մյուս կողմից՝ լրացնելով վերջինիս «ինքնամեկուսացման» արդյունքում ստեղծվելիք վակուումը:

Ինչպես նշվեց, Մեծ Բրիտանիայի համար նավթի և գազի ներմուծման պահանջարկը առաջիկա տասնամյակների ընթացքում զգալիորեն ավելանալու է՝ սեփական արդյունահանության կրճատմանը զուգահեռ: Այս էներգակիրների

պաշարների հսկայական մասը կուտակված է Մերձավոր Արևելքում և Մերձկասպյան տարածաշրջանում: Առաջիկա տարիներին Մերձավոր Արևելքը շարունակելու է մնալ աշխարհում նավթի մեկ-երրորդի և գազի 15-20 տոկոսի մատակարարը: Այսօր ՄԹ-ը հեղուկ գազի հիմնական մասը՝ շուրջ 1/3-ը ներմուծում է Կատարից, իսկ նավթի ներմուծման խոշոր գործընկերներն են Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, ԱՄԷ-ն[13]:

Արաբական երկրները կարևոր տեղ են զբաղեցնում նաև ՄԲ-ի միջազգային առևտրում, հատկապես մեծ են Մեծ Բրիտանիայից դեպի արաբական երկրներ արտահանման ծավալները: 2009-2018թթ. ընթացքում Մեծ Բրիտանիայից զենքի արտահանման 60%-ը ուղղված է եղել դեպի Մերձավոր Արևելք, այդ թվում՝ խոշոր գնորդներն են Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Օմանը[14]: Ուշագրավ է, որ տարածաշրջանի զենքի շուկայում նույնպես ՌԴ-ը Լոնդոնի հիմնական մրցակիցներից մեկն է:

[13] British Middle East strategy after Brexit, 28.11.2018, https://www.bicom.org.uk/wp-content/uploads/2018/11/middle-east-paper-FINAL-pdf.pdf (այցելվել է 16.06.2020թ.):
[14] UK defence and security export statistics for 2018, Official Statistics, UK Department for International Trade, 30.07.2019, https://www.gov.uk/government/publications/uk-defence-and-security-exports-for-2018/uk-defence-and-security-export-statistics-for-2018 (այցելվել է 16.06.2020թ.):

Մեծ Բրիտանիայի ռազմական ներկայությունը Մերձավոր Արևելքում

15

Ինչպես նշվեց, Մեծ Բրիտանիան Բրեքզիթից հետո հավակնում է դառնալ Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի ներգրավվածության թուլացման հետևանքով ամերիկյան քաղաքական գիծը պահպանող հիմնական դերակատարը, և այս միտումը արդեն իսկ դրսևորվում է տարբեր հարցերում Լոնդոնի կողմից ԱՄՆ-ին ցուցաբերվող

[15] British Middle East strategy after Brexit, 28.11.2018, https://www.bicom.org.uk/wp-content/uploads/2018/11/middle-east-paper-FINAL-pdf.pdf (այցելվել է 16.06.2020թ.):

աջակցությամբ: Այդ աջակցությունը վերջին շրջանում հատկապես դրսևորվում է Իրանի դեմ հռետորաբանության կոշտացմամբ: Լոնդոնը պարբերաբար քննադատում է Իրանի իշխանություններին, ինչպես նաև հանդես է գալիս միջուկային գործարքի վերանայման ամերիկյան դիրքորոշման պաշտպանությամբ:

Իրանի նկատմամաբ ՄԲ-ի որդեգրած քաղաքականությունը երկկողմ հարաբերություններում մի շարք ճեղքեր է առաջացրել: Վերջերս երկու երկրների միջև տեղի ունեցավ լուրջ դիվանագիտական սկանդալ, որը ավելի վատթարացրեց վերջիններիս հարաբերությունները: Այն կապված էր 2020թ. հունվարին Իրան-ԱՄՆ հարաբերությունների սրման համատեքստում ուկրաինական ինքնաթիռի խոցման և Իրանում դրան հաջորդած ցույցերի հետ, որին մասնակցել էր Մեծ Բրիտանիայի դեսպան Ռոբերտ Մակեյրը: Իրանի իշխանությունները ձերբակալել էին դեսպանին, որից հետո նա մեկնել էր Լոնդոն, և միայն շաբաթներ անց վերադարձել Իրան[16]: Նման միջադեպերը ավելի ակներև են դարձնում Իրանի հետ Մեծ Բրիտանիայի հակասությունները:

Բրեքզիթի գործընթացի ավարտը հավանաբար որոշակի փոփոխությունների կենթարկի նաև ՄԹ-Թուրքիա հարաբերությունները: ԵՄ կազմում Մեծ Բրիտանիան հանդիսանում էր Թուրքիայի եվրոինտեգրման հիմնական աջակիցներից մեկը, մինչդեռ վերջին տարիներին ԵՄ-Թուրքիա հարաբերություններում ի հայտ են եկել բազմաթիվ խնդիրներ, որոնք Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության հեռանկարները դարձրել են անիրատեսական: ԵՄ-ից դուրս գալուց հետո Լոնդոնը կփորձի ավելի խոր և բազմաշերտ հարաբերություններ կառուցել Անկարայի հետ, այդ թվում՝ վերջինիս հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքման միջոցով:

Միաժամանակ, տարածաշրջանում կարող են ՄԹ-Թուրքիա համագործակցության նոր հեռանկարներ ի հայտ գալ ռազմական ոլորտում[17]: Տարածաշրջանային քաղաքականության տեսանկյունից Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի համագործակցությունը նույնպես վերջին շրջանում ավելի ընդգծված է դարձել: Լոնդոնը Թուրքիային դիվանագիտական և քաղաքական աջակցություն է ցուցաբերում հատկապես Սիրիայում ընթացող հակամարտության ընթացքում՝ Ռուսաստանի հետ ունեցած խնդիրների մասով: Մասնավորապես, Իդլիբում այս

[16] British ambassador returns to Iran after brief arrest last month, Reuters, 07.02.2020, https://www.reuters.com/article/us-iran-britain-diplomacy/british-ambassador-returns-to-iran-after-brief-arrest-last-month-idUSKBN2010OX (այցելվել է 16.06.2020թ.):

[17] Brexit provides a win-win opportunity for Turkey and the UK, 11.11.2019, https://www.middleeastmonitor.com/20191111-brexit-provides-a-win-win-opportunity-for-turkey-and-the-uk/ (այցելվել է 16.06.2020թ.):

տարվա մարտի սկզբին ռուս-թուրքական հերթական առճակատման ամենասուր փուլում տեղի ունեցավ ՄԲ-ի ԱԳ նախարար Դոմինիկ Ռաաբի այցը Թուրքիա և հրապարակային աջակցությունը վերջինիս իշխանություններին[18]:

Ընդհանուր առմամբ, հենց Մեծ Բրիտանիայի գլոբալ և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում պետք է դիտարկել նաև վերջինիս շահերն ու հետաքրքրությունները Հարավային Կովկասում: Այստեղ Մեծ Բրիտանիան պատմականորեն ակտիվ դերակատարություն է ունեցել և այժմ էլ իր ազդեցությունը ապահովում է ինչպես փափուկ ուժի, այնպես էլ տարբեր տնտեսական, հատկապես՝ էներգետիկ նախագծերին մասնակցության միջոցով:

Հարավային Կովկասի կարևորությունը Մեծ Բրիտանիայի գլոբալ և տարածաշրջանային քաղաքականության տեսանկյունից նախ և առաջ պայմանավորված է տարածաշրջանում հարուստ էներգետիկ պաշարների առկայությամբ, ինչպես նաև վերջինիս կարևոր տարանցիկ նշանակությամբ: Այստեղով են անցնում Կասպից ծովի ավազանից դեպի Եվրոպա էներգառեսուրսների արտահանման հիմնական ենթակառուցվածքները, Չինաստանից, Հնդկաստանից դեպի Եվրոպա ձգվող տրանսպորտային հանգույցները: Հետևաբար տարածաշրջանում ներկայությունը Մեծ Բրիտանիային հնարավորություն է տալիս որոշակի ազդեցություն պահպանել հաղորդակցության այս կարևոր ուղիների նկատմամբ:

Հետխորհրդային ժամանակաշրջանում ՄԹ-ը մեծ ակտիվություն է դրսևորել հարավկովկասյան տարածաշրջանում տեղի ունեցած այնպիսի իրադարձությունների ժամանակ, ինչպիսիք էին հակամարտությունները Հյուսիսային Կովկասում (Չեչնիա), ռուս-վրացական պատերազմը, Արցախյան հակամարտությունը և այլն: Ընդ որում, ուշագրավ է այն փաստը, որ լինելով ՄԱԿ-ի ԱԽ անդամ և ունենալով տարածաշրջանում ազդեցության լուրջ լծակներ, Լոնդոնը սովորաբար նախապատվությունը տվել է հենց փափուկ ուժի կիրառմանը:

Ընդհանուր առմամբ, օբյեկտիվ պատճառներով Հարավային Կովկասում ՄԲ-ի հիմնական գործընկերը դարձել է Ադրբեջանը: Սա նախ և առաջ պայմանավորված է ՄԲ-ի էներգետիկ և տնտեսական շահերով և Ադրբեջանում կատարած հսկայածավալ ներդրումներով: Հետևաբար, Լոնդոնը տարածաշրջանի մյուս երկրների հետ իր հարաբերությունները կառուցելիս ելնում է վերոհիշյալ հանգամանքներից:

[18] Глава МИД Великобритании обсудит в Турции ситуацию в Идлибе, 02.03.2020, https://ria.ru/20200302/1567069725.html (այցելվել է 16.06.2020թ.):

Դեռևս 1994թ. Բաքվում ստորագրվեց այսպես կոչված «Դարի գործարքը», որի արդյունքում բրիտանական Բրիթիշ Փեթրոլիումը դարձավ Ադրբեջանի նավթային ոլորտում հիմնական օտարերկրյա ներդրողը: «Դարի գործարքի» ստորագրումից հետո Ադրբեջանում նավթի արդյունահանման նպատակով ստեղծված միջազգային կոնսորցիումի ամենախոշոր օտարերկրյա բաժնետերը դարձավ հենց Բրիթիշ Փեթրոլիումը: Դրան հաջորդող տարիներին բրիտանական ընկերությունը ակտիվորեն մասնակցել է Ադրբեջանի նավթագազային ոլորտում իրականացված գրեթե բոլոր, այդ թվում՝ ենթակառուցվածքային ծրագրերին՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատար, Հարավային գազային միջանցք: Բրիտանական կապիտալը ներգրավված է նաև Ադրբեջանի տնտեսության այլ ճյուղերում: Ընդհանուր առմամբ, այդ երկրում բրիտանական ընկերությունները կատարել են տասնյակ միլիարդավոր դոլարների ներդրումներ:

Արդեն 2017թ. կնքվեց «Դարի գործարք-2»-ը, որի արդյունքում Բրիթիշ Փեթրոլիումը շարունակեց պահպանել միջազգային կոնսորցիումի ամենամեծ մասնաբաժինը՝ շուրջ 30%-ը: Միջազգային նավթագազային ընկերությունների կողմից ադրբեջանական «Ազերի», «Չիրաղ», «Գյունեշլի» (ԱՉԳ) նավթահանքերի շահագործման և կառավարման վերաբերյալ այս համաձայնագրով ԱՉԳ նավթահանքերի շահագործումը երկարաձգվեց 32 տարով՝ մինչև 2050 թվականը, որի ընթացքում նախատեսվում է արդյունահանել նվազագույնը 500 միլիոն տոննա նավթ: Ուշագրավ է, որ չնայած այս վերջին համաձայնագրով բոլոր միջազգային ընկերությունների՝ այդ թվում ԲՓ-ի մասնաբաժինը կրճատվեց՝ ի հաշիվ ադրբեջանական ՍՕԿԱՌ-ի մասնաբաժնի ավելացման, սակայն բրիտանական ընկերությունը պահպանեց ամենամեծ բաժնետիրոջ կարգավիճակը[19]:

Սա վկայում է այն մասին, որ տարածաշրջանում, մասնավորապես՝ Ադրբեջանում ՄԲ-ի և բրիտանական ընկերությունների հետաքրքրությունները երկարաժամկետ են: Այս տեսանկյունից Մեծ Բրիտանիայի համար կարևորություն են ստանում ոչ միայն հարաբերությունները հիմնական գործընկեր Ադրբեջանի և այնտեղից էներգակիրների արտահանման համար տարանցիկ նշանակություն ունեցող Վրաստանի ու Թուրքիայի հետ, այլև տարածաշրջանի բոլոր դերակատարների, այդ թվում՝ Հայաստանի հետ: Տարածաշրջանի բոլոր երկրներում սեփական ազդեցության մեծացումը ՄԲ-ի համար կարևոր է այնտեղ տեղի ունեցող

[19] "Контракту века" - 23 года: в выигрыше все, 20.09.2017, https://az.sputniknews.ru/infographics/20170920/411930126/kontraktu-veka-23-goda-infografika.html (այցելվել է 16.06.2020թ.):

գործընթացների կանխատեսելիության ապահովման, սեփական ներդրումների պաշտպանության և աշխարհաքաղաքական ծրագրերի իրագործման տեսանկյունից:

Բացի այդ, տարածաշրջանի այլ երկրների նկատմամբ ազդեցությունը Լոնդոնին խուսանավելու և ավելի ճկուն քաղաքականություն վարելու, բրիտանական բիզնեսի համար ավելի նպաստավոր պայմաններ ապահովելու հնարավորություն է տալիս: Ինչպես նշվեց, այստեղ շատ կարևոր է նաև բրիտանական փափուկ ուժի դերակատարությունը: Դրա արդյունավետությունը գնահատելու տեսանկյունից ուշագրավ է այսպես կոչված «Դարի գործարք-2»-ի ստորագրմանը նախորդող ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների վերլուծությունը:

Այսպես, թեև նոր գործարքի շուրջ Ադրբեջանի և միջազգային գործընկերների միջև բանակցությունները ընթանում էին բավականին երկար ժամանակ, սակայն ի վերջո համաձայնագիրը ստորագրեց 2017-ին՝ Ապրիլյան պատերազմից գրեթե 1 տարի անց, երբ Բաքուն սանձազերծած և տանուլ տված պատերազմի պատճառով գտնվում էր միջազգային ահռելի ճնշման ներքո: Համաձայնագրի ստորագրումը զուգորդվեց բրիտանական մամուլի կողմից տարածված և միջազգային մամուլում լայն շրջանառում ստացած հայտնի «ադրբեջանական լվացքատան» սկանդալի հետ[20]՝ արդյունքում Բաքվի համար երաշխավորելով անբարենպաստ բանակցային պայմաններ:

Դրանից առաջ էլ բրիտանական ԶԼՄ-ները ակտիվորեն քննադատում էին Ադրբեջանի իշխանությունների ավտորիտար վարքագիծը, ընդդիմության նկատմամբ ճնշումները[21]: Արդյունքում Ադրբեջանի իշխանությունները նույնիսկ սկսեցին բողոքել Արցախի ճանաչման հարցում միջազգային ճնշումներից, իրենց դեմ արևմուտքի կողմից կազմակերպված տեղեկատվական արշավից: Ադրբեջանական ԶԼՄ-ներն ու Ալիևի ներկայացուցիչները սկսեց քննադատել բրիտանական ԶԼՄ-ներին՝ վերջիններիս մեղադրելով Սորոսի հիմնադրամի աջակցությամբ հակաադրբեջանական արշավ իրականացնելու մեջ[22]: Ահա այսպիսի պայմաններում

[20] Everything you need to know about the Azerbaijani Laundromat, The Guardian, 04.09.2017, https://www.theguardian.com/world/2017/sep/04/everything-you-need-to-know-about-the-azerbaijani-laundromat (այցելվել է 16.06.2020թ.): UK at centre of secret $3bn Azerbaijani money laundering and lobbying scheme, The Guardian, 04.09.2017, https://www.theguardian.com/world/2017/sep/04/uk-at-centre-of-secret-3bn-azerbaijani-money-laundering-and-lobbying-scheme (այցելվել է 16.06.2020թ.):
[21] Azerbaijanis may be jailed for insulting president on social media, 01.12.2016, https://www.bbc.com/news/world-europe-38173118 (այցելվել է 16.06.2020թ.):
[22] В Баку обвинили Сороса в организации кампании против президента Алиева, 05.09.2017, https://ee.sputniknews.ru/news/20170905/7027960/Baku-obvinil-Sorosa-organizacii-kampanii-protiv-prezidenta-Alieva.html (այցելվել է 16.06.2020թ.):«Война Сороса», или Кто стоит за попытками очернить

ստորագրվեց հայտնի «Դարի գործարք-2»-ը, որի շրջանակներում, մի շարք փորձագետների գնահատմամբ, Ադրբեջանը լուրջ զիջումների է գնացել: Այս պատմությունը կարելի է դիտարկել որպես բրիտանական փափուկ ուժի կիրառման փայլուն օրինակ՝ ի նպաստ սեփական բիզնեսի շահերի սպասարկման:

Միևնույն ժամանակ, Մեծ Բրիտանիան սերտ համագործակցություն է ձևավորել նաև Վրաստանի հետ: Վերջինս, հանդիսանալով Հարավային Կովկասում ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագիր ստորագրած միակ երկիրը, արդեն իսկ հասցրել է ամուր հարաբերություններ կառուցել նաև Լոնդոնի հետ և Բրեքզիթից հետո պատրաստվում է ավելի խորացնել այդ հարաբերությունները: Պատահական չէ, որ դեռևս 2019թ. հոկտեմբերի 21-ին Լոնդոնում Վրաստանի արտգործնախարար Դավիթ Զալկալիանին և իր բրիտանացի գործընկեր Դոմինիկ Ռաաբը ստորագրեցին նոր «Ռազմավարական գործընկերության և համագործակցության համաձայնագիր»[23]:

Վերոհիշյալ համաձայնագիրը ուժի մեջ է մտնելու Բրեքզիթի գործընթացի ավարտից հետո և Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ-ից դուրս գալուց հետո Թբիլիսիի և Լոնդոնի միջև ապահովելու է ազատ առևտրի համակարգ: Համաձայնագրով ՄԲ-ն նաև ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը: Ուշագրավ է, որ Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիան նմանատիպ առաջին պայմանագիրը կնքել է հենց Վրաստանի հետ՝ ընդ որում անմիջապես Բրեքզիթին նախորդող ժամանակաշրջանում: Սա ցույց է տալիս տարածաշրջանում բրիտանական քաղաքականության համար Վրաստանին հատկացված կարևոր դերակատարությունը[24]:

Ինչպես նշվեց, Վրաստանը առհասարակ կարևոր տարանցիկ դեր է խաղում տարածաշրջանում բրիտանական էներգետիկ նախագծերի համար: Բացի այդ, Վրաստանի դերը Լոնդոնի համար կարևորվում է նաև հակառուսական քաղաքականության համատեքստում: Մեծ Բրիտանիան ավանդաբար հանդես է եկել Վրաստանի տարածքային ամբողջականության պաշտպանությամբ և այս հարցում

Азербайджан?, 07.09.2017, https://1news.az/news/voyna-sorosa-ili-kto-stoit-za-popytkami-ochernit-azerbaydzhan (այցելվել է 16.06.2020թ.):

[23] Strategic Partnership and Cooperation Agreement between the United Kingdom of Great Britain and Northern Ireland and Georgia, London, 21 October 2019, https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/844167/CS_Georgia_1.2019_UK_Georgia_Strategic_Partnership_and_Cooperation_Agreement.pdf (այցելվել է 16.06.2020թ.):

[24] Georgia and the United Kingdom sign new strategic partnership agreement, 22.10.2019, https://caucasuswatch.de/news/2144.html (այցելվել է 16.06.2020թ.):

հաճախ նույնիսկ ավելի կոշտ դիրքորոշում է ցուցաբերել, քան ԵՄ անդամ մյուս երկրները՝ միաժամանակ աջակցելով Վրաստանին ՆԱՏՕ-ին ինտգրման հարցում:

Ընդհանուր առմամբ Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիան իրականացնում է բազմավեկտոր արտաքին քաղաքականություն՝ անուղղակիորեն ներգրավվելով նաև տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործընթացներում: Այդ քաղաքականության նպատակն է տարածաշրջանում ձևավորել իր համար կանխատեսելի և հնարավորինս վերահսկելի միջավայր, ինչը թույլ կտա արդյունավետ կերպով առաջ մղել սեփական բիզնես-քաղաքական շահերը: Բնականաբար, Լոնդոնի հետաքրքրությունների շրջանակից չի բացակայում նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որի կարգավորման գործընթացի վրա վերջինս ունի թեև ոչ այնքան ակնառու, բայց կարևոր ազդեցություն:

3. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի թվացյալ ոչ այնքան մեծ քաղաքական և դիվանագիտական ներկայության պայմաններում, բավականին մեծ ակտիվություն են դրսևորում բրիտանական հովանու ներքո գործող տարատեսակ հասարակական կազմակերպություններն ու վերլուծական կենտրոնները: Բրիտանական կամ վերջինիս հետ փոխկապակցված միջազգային վերլուծական կենտրոնները ակտիվորեն մասնակցում են ԼՂ հակամարտության կարգավորման շուրջ փորձագիտական քննարկումներին և հասարակություններին խաղաղության նախապատրաստելու տարատեսակ ծրագրերին: ԼՂ հակամարտության հարցում Լոնդոնի քաղաքականությունը այս տեսանկյունից շատ յուրօրինակ է. այն հիմնված է երկարաժամկետ նպատակների վրա, ներառում է առաջին հերթին աշխատանքը տարածաշրջանի քաղհասարակության ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս միջոցով հակամարտության կարգավորման գործընթացի վրա ազդելու նպատակով[25]:

Այսպես, տարիներ շարունակ հակամարտության կարգավորման գործընթացի նկատմամբ մեծ հետաքրքրություն են դրսևորել Ֆորին Օֆիսի հետ սերտ համագործակցության մեջ գտնվող այնպիսի կենտրոններ, ինչպիսիք են «Հաշտեցման ռեսուրսները»[26], «Միջազգային ահազանգը»[27], «Պատերազմի և խաղաղության

[25] L. Broers, Three Challenges for UK Peacebuilding Policy in the South Caucasus After Brexit, 21.01.2020, https://www.chathamhouse.org/expert/comment/three-challenges-uk-peacebuilding-policy-south-caucasus-after-brexit (այցելվել է 16.06.2020թ.):
[26] Conciliation Resources, https://www.c-r.org/programme/caucasus (այցելվել է 16.06.2020թ.):
[27] International Alert, https://www.international-alert.org/where-we-work/south-caucasus (այցելվել է 16.06.2020թ.):

ինստիտուտը»[28] և այլն: Այս կազմակերպությունները, ինչպես նաև բրիտանական կառավարության հետ սերտ կապեր ունեցող «Միջազգային ճգնաժամային խումբը», Արցախյան հակամարտության կարգավորման հարցում գաղափարներ գեներացնող հիմնական միջազգային վերլուծական հարթակներն են: Եթե ուսումնասիրենք այս հարթակների կողմից միայն վերջին տարիներին իրականացրած աշխատանքը և հրապարակած վերլուծությունները, ապա կնկատենք, որ դրանց հիմնական նպատակն է հակամարտության գոտում ազդել հանրային տրամադրությունների և հակամարտության ընկալման վրա՝ նման կերպ փորձելով ներազդել նաև բուն կարգավորման գործընթացի վրա:

«Միջազգային ահազանգը» Հարավային Կովկասում իր գործունեությունը սկսել է դեռևս 1993-ից և հիմնականում զբաղվել է վրաց-աբխազական, վրաց-օսեթական և Լեռնային Ղարաբաղի հակամարտություններով: Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն է հակամարտող կողմերի բնակչության միջև երկխոսության հաստատումն ու շփումների կազմակերպումը: Արցախյան հակամարտության վերաբերյալ կենտրոնի վերջին ծավալուն հրապարակումը լույս է տեսել 2018թ. հոկտեմբերին՝ «Խաղաղության տեսլականը. Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ հիմնարար տեսակետների վերլուծություն» վերնագրով:

Վերլուծությունն ուշագրավ է այն տեսանկյունից, որ դրանում ակտիվորեն ներգրավված են եղել փորձագետներ Հայաստանից և Ադրբեջանից: Վերլուծության մեջ կարմիր գծով անցնում է «պատմական կարծրատիպերից ազատվելու» գաղափարը, ընդ որում հեղինակների կարծիքով անհրաժեշտ է ձևավորել այլընտրանքային պատմական երկխոսություն՝ ներկայացնելով «խաղաղության հերոսներին»՝ ի հակակշիռ «պատերազմի հերոսների»[29]: Ուշագրավ է, որ վերլուծությունը լույս է տեսել նույն ժամանակահատվածում, երբ ԱՄՆ-ի նախագահի անվտանգության հարցերով նախկին խորհրդական Ջոն Բոլթոնը Երևանում բարձրաձայնեց «պատմական կաղապարներից/կարծրատիպերից» ազատվելու իր հայտնի կոչը: Ընդ որում, այս տեսակետը անգլո-ամերիկյան քաղաքական-փորձագիտական շրջանակների կողմից Հայաստանին բազմիցս հրամցվել է նաև հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, և որպես կանոն՝ նման կոչերի հիմնական հասցեատերը հանդիսանում է հենց հայկական կողմը:

[28] The Institute for War & Peace, https://iwpr.net/projects/europe-eurasia (այցելվել է 16.06.2020թ.):
[29] Envisioning peace An analysis of grassroots views on the Nagorny Karabakh conflict, 10.2018, https://www.international-alert.org/sites/default/files/Caucasus_EnvisioningPeace_EN_2018.pdf (այցելվել է 16.06.2020թ.):

«Հաշտեցման ռեսուրսները» Լոնդոնում գործող մեկ այլ միջազգային կազմակերպություն է, որը Հարավային Կովկասում զբաղվում է վրաց-աբխազական և Լեռնային Ղարաբաղի հակամարտություններով: Արցախյան հակամարտությանը վերաբերող հարցերով կազմակերպությունը սկսել է հետաքրքրվել 2003-ից, հիմնական գործունեությունը ուղղված է հակամարտության վերաբերյալ փաստագրական նյութերի, ֆիլմերի պատրաստմանը: Կազմակերպության հովանու ներքո ձևավորված «Ղարաբաղի կոնտակտային խմբի» շրջանակներում գործում է քննարկումների հարթակ, որին մասնակցում են հակամարտող կողմերի քաղհասարակության ու փորձագիտական շրջանակների ներկայացուցիչներ: Այս քննարկումների արդյունքում գեներացվում են հակամարտության կարգավորման տարրերին վերաբերող մի շարք գաղափարներ: «Հաշտեցման ռեսուրսների» նախաձեռնությամբ ձևավորվել և գործում է «Եվրոպական գործընկերություն՝ հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» հարթակը, որը ներկայացնում է հակամարտության կարգավորմամբ շահագրգռված միջազգային կազմակերպությունների մի խումբ[30]:

Արցախյան հակամարտության վերաբերյալ «Հաշտեցման ռեսուրսների» վերջին վերլուծությունը հրապարակվել է 2019թ. հուլիսին՝ «Բնակչությանը նախապատրաստելով խաղաղության. կիրառումը՝ հայ-ադրբեջանական խաղաղ կարգավորման համատեքստում» վերնագրով: Վերլուծությունը հիմնված է 2019թ. մայիսին «Ղարաբաղի կոնտակտային խմբի» անցկացրած հերթական հանդիպման ժամանակ տեղի ունեցած քննարկումների վրա, որի ընթացքում մասնակիցները անդրադարձել են 2019թ. հունվարին ԵԱՀԿ ՄԽ համանախագահների և Հայաստանի ու Ադրբեջանի ԱԳ նախարարների հայտարարությանը՝ «ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու անհրաժեշտության» մասին:

Ուշագրավ են այս վերլուծության մեջ արտացոլված մի շարք տեսակետներ և առաջարկներ: Այսպես, մեծ կարևորություն է տրվում Արցախի 2020թ. նախագահական ու խորհրդարանական ընտրություններին, և այդ իրադարձությունները փորձ է արվում ներկայացնել որպես հակամարտության կարգավորման տեսանկյունից անկյունաքարային հանգամանք: Ներկայացվում է նաև հակամարտող կողմերի միջև լրագրողների փոխանակման միջոցառման գաղափարը, որը ինչպես գիտենք, հետագայում ՄԽ համանախագահների ջանքերով կյանքի կոչվեց 2019թ.աշնանը:

[30] The Nagorny Karabakh conflict in focus, https://www.c-r.org/programme/caucasus/nagorny-karabakh-conflict-focus (այցելվել է 16.06.2020թ.):

Վերլուծության հեղինակները նաև կարևորում են այսպես կոչված քաղաքականության համակարգման գաղափարը, որի շրջանակներում առաջարկում են ՀՀ ԱԽ գրասենյակում ձևավորել վարչապետի աշխատակազմի, ԱԺ ներկայացուցիչներից, արտաքին գործերի և պաշտպանության փոխնախարարներից, Արցախի իշխանության և քաղհասարակության ներկայացուցիչներից կազմված համակարգող կառույց: Ադրբեջանում առաջարկվում է Վրաստանի օրինակով ստեղծել Հաշտեցման և քաղաքացիական հավասարության նախարարություն: Նաև որոշակի առաջարկներ են ներկայացվում՝ կապված բանակցային գործընթացում Ղարաբաղի ադրբեջանական համայնքի դերակատարության (մասնավորապես՝ այդ համայնքի ներկայացուցչի դերի բարձրացման), հակամարտող կողմերի միջև փոխանակման այլ ծրագրերի իրականացման, Արցախում ՀԿ-ների և ՁԼՄ-ների զարգացման և այլնի վերաբերյալ[31]: Նախորդ ամիսների իրադարձությունները ցույց են տալիս, որ այս գաղափարների մի մասը այսպես թե այնպես կյանքի են կոչվել՝ ադրբեջանական համայնքի դերակատարության մեծացում, Արցախում տարբեր ՀԿ-ների գործունեության ակտիվացում և այլն:

Արցախյան հակամարտության վերաբերյալ պարբերաբար ծավալուն վերլուծություններ է հրապարակում նաև «Միջազգային ճգնաժամային խումբը», որի ձևավորման արմատները նույնպես սկիզբ են առնում Լոնդոնից, հիմնական դոնորներից մեկը հանդիսանում է Բրիթիշ Փեթրոլիումը, իսկ ստեղծման ու ֆինանսավորման ակնունքներում կանգնած է եղել «Բաց հասարակություն հիմնադրամների» ղեկավար Ջորջ Սորոսը[32]: Վերջինս տարբեր թելերով կապված է Մեծ Բրիտանիայի իշխանությունների հետ, և պատահական չէ, որ նրա հովանու ներքո ՀՀ-ում գործող մի շարք այլ ՀԿ-ներ նույնպես ակտիվ գործունեություն են ծավալում ԼՂ հակամարտության ուղղությամբ: ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի տեսանկյունից հատկապես ուշագրավ է Միջազգային ճգնաժամային խմբի կողմից 2019թ. դեկտեմբերին հրապարակված «Դուրս գալով փակուղուց՝ Լեռնային Ղարաբաղում» վերնագրով վերլուծությունը[33]: Այս վերլուծությունը ուշագրավ է այն տեսանկյունից, որ հիմնականում առաջ է քաշում հակամարտության կարգավորման այնպիսի միջոցառումներ, որոնք շատ դեպքերում հակասում են

[31] ‘Preparing populations for peace’: Implications for Armenian-Azerbaijani peacebuilding, 07.2019, https://rc-services-assets.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/Preparing_populations_for_peace.pdf (այցելվել է 16.06.2020թ.):
[32] International Crisis Group, History, https://www.crisisgroup.org/who-we-are/history (այցելվել է 16.06.2020թ.):
[33] Digging out of Deadlock in Nagorno-Karabakh, 20.12.2019, https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/255-digging-out-deadlock-nagorno-karabakh (այցելվել է 16.06.2020թ.):

հայկական կողմի շահերին, միաժամանակ կողմերին մղում է կարգավորման ավելի արագ գործընթացի:

Բրիտանական փորձագիտական-վերլուծական կենտրոնները Արցախյան հակամարտության շուրջ փորձագիտական-վերլուծական աշխատանքների շրջանակներում ակտիվորեն համագործակցում են նաև ամերիկյան և եվրոպական այլ վերլուծական կենտրոնների հետ: Մասնավորապես, ակտիվ համագործակցություն է առկա «Կարնեգի» հիմնադրամի հետ, որը նույնպես Արցախյան հակամարտության վերաբերյալ պարբերաբար վերլուծություններ է հրապարակում: Այսպիսով, չլինելով Մինսկի խմբի անդամ, Մեծ Բրիտանիան անուղղակիորեն մասնակցում է Արցախի հակամարտության կարգավորման գործընթացին՝ ապավինելով առաջին հերթին փափուկ ուժի ընձեռած հնարավորություններին:

Մեծ Բրիտանիայի հետաքրքրությունը Արցախյան հակամարտության նկատմամբ և անուղղակի մասնակցությունը կարգավորման գործընթացին պատահական չէ, և ինչպես նշվեց, բխում է տարածաշրջանում վերջինիս երկարաժամկետ շահերից: Այդ շահերը լիարժեքորեն սպասարկելու համար միայն Ադրբեջանի վրա ազդեցության գործոնը բավարար չէ և լիովին չի ապահովագրում բոլոր հնարավոր ռիսկերից: Այդ իսկ պատճառով Լոնդոնը փորձում է որոշակի վերահսկողություն սահմանել ընդհանուր տարածաշրջանային գործընթացների նկատմամբ, ինչը թույլ կտա հնարավորինս բարենպաստ պայմաններ ստեղծել բրիտանական բիզնեսի և քաղաքականության համար:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի նկատմամբ Մեծ Բրիտանիայի հետաքրքրությունը ավանդաբար ավելի համեստ է եղել, քան Ադրբեջանի և Վրաստանի պարագայում, ինչը առաջին հերթին պայմանավորված է Հայաստանում ՌԴ ամուր դիրքերով: Սակայն դա չի նշանակում, որ Հայաստանը ընդհանրապես դուրս է մնացել ՄԲ-ի ուշադրությունից, ուղղակի այս պարագայում Լոնդոնը նախընտրում է փափուկ ուժի կիրառման քաղաքականությունը:

Տարիներ շարունակ Մեծ Բրիտանիան անուղղակիորեն ներգրավված է եղել Հայաստանում տեղի ունեցող գործընթացներին՝ առաջին հերթին աշխատելով քաղհասարակության ներկայացուցիչների և հասարակական կազմակերպությունների հետ: Հարավային Կովկասի երեք երկրների հետ Մեծ Բրիտանիայի հարաբերությունների մակարդակի մասին լիարժեք պատկերացում

կազմելու համար կարևոր է նաև այդ երկրների հետ ՄԲ-ի առևտրատնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը:

Այսպես, 2018թ. տվյալներով տարածաշրջանում ՄԲ-ն ամենամեծ առևտրաշրջանառությունը ունեցել է Ադրբեջանի հետ՝ շուրջ 1,073 մլրդ ֆունտ: Ընդ որում, 2017թ. համեմատ երկկողմ առևտրի շրջանառությունը ավելացել է շուրջ 54%-ով (380 մլն ֆունտ), իսկ Ադրբեջանից ներմուծումը ավելացել է շուրջ 2,3 անգամ: Վրաստանի և Մեծ Բրիտանիայի միջև առևտրի շրջանառությունը 2018-ին կազմել է 123 մլն ֆունտ: Իսկ ահա, Հայաստանը տարածաշրջանում Լոնդոնի ամենափոքր առևտրային գործընկերն է. երկկողմ առևտրի շրջանառությունը 2018-ին կազմել է ընդամենը 32 մլն ֆունտ: Ընդ որում, 2017թ. համեմատ երկկողմ առևտրի ծավալները կրճատվել են ավելի քան 70%-ով՝ 2017-ին այն կազմել է 116 մլն ֆունտ: Ընդհանուր առմամբ 2018թ. տվյալներով ՀՀ-ի հետ ՄԹ-ի առևտրաշրջանառությունը ավելի քան 33 անգամ զիջում է Ադրբեջանի ցուցանիշին, շուրջ 3,8 անգամ՝ Վրաստանի ցուցանիշին: Ուշագրավ են նաև Թուրքիայի և ՄԲ-ի միջև առևտրի շրջանառության ցուցանիշները. 2018-ին այն կազմել է ավելի քան 17 մլրդ ֆունտ:[34]

Մեծ մասամբ երկկողմ տնտեսական հարաբերությունների վերոհիշյալ ցուցանիշները գրեթե ամբողջությամբ արտացոլում են տարածաշրջանի երկրների հետ Մեծ Բրիտանիայի քաղաքական հարաբերությունների մակարդակը: Սակայն դա չի նշանակում, որ հայ-բրիտանական հարաբերությունները չունեն ընդլայնման և զարգացման զգալի հեռանկար: Հարկավոր է լուրջ աշխատանք տանել տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի բիզնես-քաղաքական շահերը ճիշտ հաշվարկելու, Հայաստանի համար դրանց անբարենպաստ կողմերը չեզոքացնելու և փոխշահավետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ:

Ինչպես նշվեց, Բրեքզիթի գործընթացի ավարտից հետո ակնկալվում է, որ Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությունը որոշակի փոփոխությունների կենթարկվի, ինչը հավանաբար կանդրադառնա նաև Հարավային Կովկասում վերջինիս քաղաքականության վրա: Այս համատեքստում Հայաստանը ճիշտ դիրքավորման և որոշակի դիվանագիտական ջանքերի գործադրման միջոցով կարող է տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի համար ավելի կարևոր գործընկեր դառնալ, որը հնարավորություն կտա զսպել Ադրբեջանի հետ վերջինիս համագործակցության ռիսկերը: Դրա համար կան բավական բարենպաստ նախադրյալներ, որոնք, սակայն,

[34] Geographical breakdown of the current account, The Pink Book 2019, UK Office for National Statistics, https://www.ons.gov.uk/economy/nationalaccounts/balanceofpayments/datasets/9geographicalbreakdownofthecurrentaccountthepinkbook2016 (այցելվել է 16.06.2020թ.):

պետք է օգտագործվեն ոչ թե Հայաստանի ներքաղաքական կյանքում ՄԲ-ի ազդեցության մեծացման, այլ տարածաշրջանային հարցերի շուրջ փոխշահավետ համագործակցության խորացման նպատակով:

Արդեն անդրադարձանք այն հարցին, թե Հարավային Կովկասում իր բիզնես-քաղաքական շահերը առաջ տանելու նպատակով Մեծ Բրիտանիայի համար ինչպիսի կարևոր դերակատարում ունեն իր հովանու ներքո գործող տարբեր ուղեղային կենտրոններն ու հասարակական կազմակերպությունները: Մինչև 2018-ին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը վերջիններս օգտագործվում էին ոչ միայն Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացի վրա ներազդելու, այլև Հայաստանում քաղաքական գործընթացների վրա որոշակի ազդեցություն ձևավորելու նպատակով: Պատահական չէ, որ Մեծ Բրիտանիան 2018-ի ապրիլ-մայիսին Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների ժամանակ և դրանից հետո մեծ մասամբ չէր թաքցնում «հեղափոխական» ուժերի նկատմամբ իր համակրանքը[35]:

2019թ. ամռանը տեղեկատվություն տարածվեց, որ Մեծ Բրիտանիան ցանկանում էր Հայաստանում նոր դեսպան նշանակել հայազգի Ալան Գոգբաշյանին, սակայն հետագայում այս որոշումը վերանայվեց:[36] Կա տեսակետ, որ վերջինս Հայաստանում ունի քաղաքական կապեր, ինչի պատճառով վերանայվել է նրա նշանակման հարցը: Արդեն 2019թ. նոյեմբերին ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի նոր ներկայացուցիչ նշանակվեց գործերի հավատարմատար Դեյվիդ Մորանը[37]: Այս կադրային փոփոխությունները նույնպես վկայում են այն մասին, որ Լոնդոնը վերանայում է Հայաստանում իր քաղաքականությունը:

Իշխանափոխությունից հետո բրիտանական փափուկ ուժը Հայաստանում մի կողմից սկսեց նպաստել նոր իշխանության կայացմանը, մյուս կողմից՝ ակտիվացրեց ջանքերը ԼՂ հակամարտության կարգավորման ուղղությամբ, այդ թվում՝ կարգավորման գործընթացում նոր գաղափարներ գեներացնելու միջոցով:

---

[35] 35th Universal Periodic Review: UK statement on Armenia, 29.01.2020, https://www.gov.uk/government/news/35th-universal-periodic-review-uk-statement-on-armenia (այցելվել է 16.06.2020թ.): Minister for Europe welcomes the results of Armenia's parliamentary elections, 12.12.2018, https://www.gov.uk/government/news/minister-for-europe-welcomes-the-results-of-armenias-parliamentary-elections (այցելվել է 16.06.2020թ.):

[36] British Embassy Yerevan facebook official page, 14.10.2019, https://www.facebook.com/britishembassyyerevan/posts/mr-alan-gogbashian-will-no-longer-be-taking-up-the-role-of-her-majestys-ambassad/10156335197960811/ (այցելվել է 16.06.2020թ.):

[37] Chargé d'Affaires to Armenia David Moran, Biography https://www.gov.uk/government/people/david-moran (այցելվել է 16.06.2020թ.):

Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի երկարաժամկետ շահերի տեսանկյունից բնական է վերջինիս շահագրգռվածությունը հակամարտության շուտափույթ կարգավորման հարցում: Տարածաշրջանում Ադրբեջանի հետ առանձնահատուկ, սերտ համագործակցությունը այս հարցում ՄԲ-ին դրդում է նաև ավելի կողմնակալ դիրքորոշման, որը և արտացոլվում է բրիտանական փափուկ ուժի կողմից հակամարտության կարգավորման ուղղությամբ առաջ քաշվող ոչ այնքան հայանպաստ գաղափարներում:

Մեծ Բրիտանիայի աշխարհաքաղաքական դերակատարության մեծացումը և ԱՄՆ-ի հետ վերջինիս համագործակցության խորացումը կարող է ավելի ակտիվացնել Լոնդոնի ներգրավվածությունը Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացներին, իսկ երբեմն նաև փոխարինել ԱՄՆ-ի նվազող ազդեցությանը: Մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ վերջինիս մրցակցության խորացումը կարող է բացասական տեսանկյունից իր ազդեցությունը ունենալ նաև այս տարածաշրջանի վրա: Հաշվի առնելով հայ-ռուսական հարաբերությունների ռազմավարական նշանակությունը՝ նման սցենարը կարող է Հայաստանի համար նոր ռիսկեր ի հայտ բերել:

Մեծ Բրիտանիայի հետ փոխշահավետ համագործակցության զարգացումը հնարավորություն կտա որոշակիորեն շտկել այս իրավիճակը: Այս առումով շատ կարևոր դերակատարություն կարող է ստանձնել ՀՀ նախագահը, ով երկար տարիներ լինելով Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպանը, հասցրել է բրիտանական վերնախավի հետ ամուր կապեր և համագործակցություն ձևավորել:

Հարկավոր է մեծ ջանքեր գործադրել, որպեսզի Հայաստանը ոչ թե ստիպված լինի իր արտաքին քաղաքական օրակարգը հարմարեցնել այս կամ այն գերտերության տարածաշրջանային շահերին, այլ դրանց ճիշտ համադրության շնորհիվ կարողանա առաջ մղել սեփական օրակարգը: Այս առումով Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի ներկայությունը հնարավոր է և պետք է օգտագործել ի շահ Հայաստանի, այդ թվում նաև Արցախյան հարցում՝ օգտագործելով նաև ՀՀ նախագահի կապերն ու հեղինակությունը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*